



Նյութը թարգմանել է **Մաթենիկ Գևորգյանը**

Ք. Երևանի, Համար 144 հիմնական դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի

Մեթոդը վերցված է՝ Lance G. King, MYP ATL skills workbook, 2016

### Հաղորդակցման կոմպետենցիայի զարգացում

#### Հետադարձ կապ

1. Տալ և ստանալ իմաստալից հետադարձ կապ

##### Վարպետություն

Երբ կարողանաք լսել, ընդունել և պատշաճ կերպով արձագանքել ցանկացած հետադարձ կապի՝ արված ցանկացած մեկի կողմից, ապա այս դեպքում կհասկանաք, որ գտնվում եք գիտակի մակարդակում Դասավանդման և Ուսումնառության մոտեցումների օգտագործման մեջ:

Հետադարձ կապ նշանակում է հաղորդագրություններ, որոնք դուք ստանում եք այլ մարդկանցից այն մասին թե ինչպես են նրանք ընկալում ձեզ: Երբեմն այդ հաղորդագրությունները դրական են լինում, երբեմն լիովին չեզոք, երբեմն էլ դրանք այն բանների մասին են, որոնք ըստ իրենց կարելի է փոփոխել:

Հետադարձ կապ տալ և ստանալու նպատակն է բարելավել ձեր կատարողականը:

Դասավանդման և Ուսումնառության մոտեցումների նպատակն է սովորել ընդունել ուրիշների կողմից տրված բոլոր տեսակի հետադարձ կապերը:

-----  
**Վարժություն 1 – Բանավոր հետադարձ կապ**

ա ) Կազմե՛ք հետադարձ կապի տեսակների երեք ցուցակ.

Ըստ ձեզ ինչպե՛ս կարելի է ասել ինչ-որ բան մեկին, որը կդիտվի որպես դրական հետադարձ կապ:

Ինչպե՛ս կարելի է տալ ավելի չեզոք հետադարձ կապ :

Ինչպե՛ս տալ հետադարձ կապ փոփոխության վերաբերյալ:

Գրե՛լ յուրաքանչյուրից մի քանի օրինակ:

1. Օրինակ ` ինձ դուր է գալիս, ես հավանեցի, ես ... \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

2. Ես հասկանում եմ, ես համաձայն եմ, ես.... \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

3. Ես չեմ հասկանում, ինձ պետք է, ես... \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

**Վարժություն 2 – Հետադարձ կապ գրավոր աշխատանքի մասին**

ա) Նստե՛ք ձեր գործընկերոջ հետ և **Նշումներ**  
փոխանակեք ձեր աշխատանքային գրքերը *Դրսկան:* \_\_\_\_\_  
կամ էլ ձեր գրառումները ձեր առարկայից: \_\_\_\_\_  
բ) Ապա նայե՛ք ձեր գործընկերոջ գրավոր \_\_\_\_\_  
աշխատանքը և տվեք ձեր հետադարձ \_\_\_\_\_  
կապը նրա գրած աշխատանքի վերաբերյալ, \_\_\_\_\_  
կամ թե ինչպես է նա գրել դա, ինչ տեսք \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

ունեն էջերը և հետո միայն լսեք ձեր գործընկերոջ կարծիքը ձեր կատարած աշխատանքի վերաբերյալ:

գ) **Կարևոր է`** Միակ ընդունելի պատասխանը ցանկացած հետադարձ կապի վերաբերյալ դա «Շնորհակալություն» պատասխանն է: Ուրիշ ոչինչ: Կարիք չկա բացատրություն տալ, պաշտպանվել կամ արդարանալ, պարզապես պետք է ասել «Շնորհակալություն»:

դ) Ա-ն առաջինն է գնում և նշում ընդամենը մի բան, ինչն իրեն դուր է գալիս Բ-ի աշխատանքում:

ե) Բ-ն ասում է «Շնորհակալություն»: Հետո էլ Բ-ն է նշում այն, ինչն ինքը հավանում է Ա-ի աշխատանքում:

զ) Ա-ն ասում է «Շնորհակալություն»:

է) Հետո երկուսն էլ գրում են իրենց հետադարձ կապը նշումներում:

-----  
-----  
-----  
-----  
-----

*Չեզոք:*-----  
-----  
-----  
-----  
-----

*Փոփոխություն:*-----  
-----  
-----  
-----  
-----

